ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

| | |
|---|---|
| Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը | Տանիքագործ |
| I.Դերը՝ | Տանիքների ծածկույթի և առանձին տարրերի կառուցում և վերանորոգում՝ գլանափաթեթավոր, մածիկային, հատավոր և մետաղական նյութերի կիրառմամբ, ինչպես նաև հարակից ատաղձագործական,փականագործական և մոնտաժային աշխատանքների կատարում |
| II. Խնդիրների բնագավառները | |
| Խնդիրների բնագավառ 1. | |
| Աշխատանքային գործընթացը | Տանիքային ծածկույթների իրականացում՝գլանափաթեթավոր և մածիկային նյութերի կիրառմամբ |
| Կատարման չափանիշներ | . կատարում է ծածկույթի հիմնաշերտի իրականացում<br>.կարող է իրականացնել ծածկույթի հիմնաշերտը,<br>.կատարում է գոլորշամեկուսիչ, ջերմամեկուսիչ և ջրամեկուսիչ շերտերի իրականացում ,<br>.կարող է տեղադրել գլանափաթեթավոր նյութերը ձեռքով և հարմարանքների ու սարքավորումների կիրառմամբ,<br>. կարող է տեղադրել տանիքի առանձին տարրեր,<br>.կարող է տեղադրել մածիկային ծածկույթը տարբեր թեքության տանիքներում,<br>.կարող է վերահսկել տանիքային ծածկույթի իրականացման որակը: |
| Խնդիրների բնագավառ 2. | |
| Աշխատանքային գործընթացը | Տանիքային ծածկույթի իրականացում ոչ մետաղական թերթային և մանրահատավոր նյութերից |
| Կատարման չափանիշներ | .կարող է իրականացնել ծածկույթի հիմնաշերտը,<br>.կարող է իրականացնել գոլորշամեկուսիչ, ջերմամեկուսիչ և ջրամեկուսիչ շերտերը,<br>.կարող է տեղադրել ոչ մետաղական թերթերը և մանրահատավոր նյութերը ՝ առանձին տանիքային տարրերի համար կիրառելով մետաղական և ոչ մետաղական դետալներ,<br>. կարող է իրականացնել ջրահեռացման համակարգը,<br>.կարող է վերահսկել տանիքային ծածկույթի իրականացման որակը: |
| Խնդիրների բնագավառ 3 | |

| III. Պատասխանատվությունը | |
| --- | --- |
| Աշխատանքային գործընթացը | Տանիքային ծածկույթի իրականացում մետաղական նյութերից |
| Կատարման չափանիշներ | . կարող է իրականացնել գոլորշամեկուսիչ, ջերմամեկուսիչ և ջրամեկուսիչ շերտերը,<br>.կարող է պատրաստել շաբլոններ, դրանց կիրառմամբ հավաքել ծածկի դետալներ և ձևավոր մասեր,<br>. կարող է մշակել տանիքային մետաղական նյութերը ձեռքով և մեքենայացված եղանակով,<br>.կարող է պատրաստել շարքային ծածկի պաստառները և տանիքային առանձին տարրերը,<br>. կարող է իրականացնել տանիքի առանձին տարրերի ծածկումը մետաղական դետալներով,<br>.կարող է տեղադրել շարքային ծածկույթը ՝ տանիքի ձևից կախված,<br>.կարող է իրականացնել ջրահեռացման համակարգը,<br>.կարող է վերահսկել տանիքային ծածկույթի իրականացման որակը: |
| Խնդիրների բնագավառ 4. | |
| Աշխատանքային գործընթացը | Տանիքային ծածկույթի և առանձին տարրերի վերանորոգում |
| Կատարման չափանիշներ | . կարող է ապամոնտաժել վնասված տանիքային ծածկույթը, դրա առանձին տարրերը և տանիքի առանձին կառուցվածքային տարրերը,<br>.կարող է փոխարինել կամ վերանորոգել տանիքի առանձին կառուցվածքային տարրերը,<br>.կարող է վերանորոգել ցեմենտային կամ բետոնային հարթեցնող շերտերը,<br>.կարող է փոխարինել տարբեր նյութերից տանիքային ծածկույթներ՝ մասնակիորեն կամ ամբողջությամբ,<br>.կարող է ապամոնտաժել և փոխարինել ջրահեռացման համակարգի տարրերը,<br>.կարող է վերահսկել վերանորոգման աշխատանքների որակը: |
| Խնդիրների բնագավառ 5. | |
| Աշխատանքային գործընթացը | Հարակից աշխատանքների իրականացում տանիքային ծածկույթի տեղադրման և վերանորոգման ժամանակ |
| Կատարման չափանիշներ | |

| | |
|---|---|
| | կարող է իրականացնել անձնական<br><br>գործունեության գնահատում և շտկում, պատասխանատվություն է կրում անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու, նյութական միջոցները խնայողաբար օգտագործելու, աշխատանքի անվտանգության կանոնների պահպանումն ապահովելու, համապատասխան տեղեկությունները վերադասին ժամանակին և սահմանված կարգով տրամադրելու և աշխատանքային կարգապահությունն ապահովելու համար: |
| IV. Լեզուները | Հայոց լեզու գերազանց<br><br>Օտար լեզու բավարար |
| V. Համակարգիչը | .պետք է տիրապետի համակարգչային Word ,Excel, Internet Explorer ծրագրերին, ժամանակակից տեղեկատվական և կոմունիկացիոն տեխնոլոգիաներին - տեքստային փաստաթղթեր հավաքելու, խմբագրելու, ձևավորելու, պահպանելու, տպագրելու կարողություններ,<br>- համացանցից օգտվելու բավարար կարողություններ |
| VI. Գիտելիքները | - պետք է իմանա՝ինարարական գծագրության հիմունքները,<br>-հիմնական տեղեկություններ շենքերի և կառույցների վերաբերյալ,<br>-շենքերի և կառույցների հիմնական տարրերը,<br>- շենքերի և կառույցների հիմնական կառուցվածքային սխեմաները,<br>- շինարարական աշխատանքների տեսակները և դրանց կատարման հաջորդականությունը,<br>- տանիքային համակարգերը,<br>- տարբեր տեսակի տանիքների կառուցման և վերանորոգման տեխնոլոգիան և կազմակերպումը,<br>- տանիքային ծածկույթների և տանիքի առանձին տարրերի արատները , վնասվածքները և դրանց վերացման եղանակները,<br>- հարակից աշխատանքների տեխնոլոգիական հիմունքները / հյուսնական, ատաղձագործական, մոնտաժային /,<br>-տանիքային ծածկույթների և տարրերի հիմնական նյութերի նկարագիրը և տեխնիկական բնութագրերը,<br>- տանիքագործական սարքավորումների, մեխանիզմ ների , գործիքների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, |

| | |
|---|---|
| | -վերամբարձ մեխանիզմների և հարմարանքների ընդհանուր բնութագիրը և աշխատանքի սկզբունքը,<br>-տանիքային աշխատանքների ծավալների որոշման եղանակները,<br>- տանիքագործական աշխատանքների որակի հսկման կանոնները,<br>- մասնագիտական գործունեության անվտանգ պայմանների ապահովման առանձնահատկությունները,<br>- շրջակա միջավայրի պահպանման կանոնները: |
| VII. Կարողությունները և հմտությունները | -կարող է՝իրականացնել տանիքային ծածկույթներ և տանիքի առանձին տարրեր՝համաձայն աշխատանքային գծագրերի, սխեմաների , էսքիզների , աշխատանքների ղեկավարի առաջադրանքի և հրահանգների,<br>-իրականացնել տանիքային ծածկույթի և տանիքի առանձին կառուցվածքային տարրերի վերանորոգում և փոխարինում համաձայն աշխատանքային գծագրերի, սխեմաների , էսքիզների, աշխատանքների ղեկավարի առաջադրանքի և հրահանգների,<br>- դասավորել նյութերը, գործիքները, սարքավորումները , հանդերձանքն աշխատանքային ճակատի սահմաններում,<br>- կիրառել տանիքագործական սարքավորումներ, հարմարանքներ, գործիքներ,<br>- կատարել տանիքային նյութերի կախաճոպանում և ընդունում աշխատանքային ճակատում,<br>- կատարել անհրաժեշտ հարակից աշխատանքներ / հյուսնական, առաղձագործական, մոնտաժային /,<br>- վերահսկել աշխատանքների կատարման որակը,<br>- աշխատանքի ժամանակ պահպանել անվտանգության տեխնիկայի և շրջակա միջավայրի պահպանման կանոնները,<br>-կատարել չափումներ և տանիքային աշխատանքների ծավալների պարզ հաշվարկ,<br>- կիրառել տեղեկատվական և կոմունիկացիոն տեխնոլոգիաները մասնագիտական գործունեությունում: |
| VIII. Վերաբերմունքը | հասկանում է մասնագիտության էությունը և նշանակությունը,<br>կայուն հետաքրքրություն է ցուցաբերում մասնագիտության նկատմամբ,<br>կարող է աշխատել թիմում և արդյունավետ շփվել գործընկերների հետ,<br>իրականացնում է անձնական գործունեություն՝ ելնելով ղեկավարի կողմից առաջադրված նպատակներից և |

| | |
|---|---|
| | դրանց հասնելու միջոցառումներից,<br>կարող է վերլուծել աշխատանքային իրավիճակները , իրականացնել ընթացիք և ամփոփիչ վերլուծություն<br>հանդես է գալիս պարտաճանաչ, կարգապահ, ուշադիր, զգույշ հատկանիշներով |